

ՏԷՐ ԶՕՐԻ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԸ

“ԱՅՍ ՈՍԿՈՐՆԵՐԸ ԿՐՆԱ՞Ն
Կ Ե Ն Դ Ա Ն Ա Ն Ա Լ”

CAN THESE BONES LIVE?

ԱԼՊԷՌ ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱ

ԳԱՅ-ՔՐԻՍՏՈՆԵԱՅ

1998

Ձ Օ Ն

Աստուածաձեռքը և հաւատալոյս այս մարգարէութիւնը կը ձօնեմ այն քաջակորով նահատակներուն, որոնք ինկան սակայն չկորան, որոնք մեռան ո՛չ փառքի և ո՛չ ալ հարստութեան համար, այլ յաւերժացնելու համար Քրիստոսի հաւատքը իրենց ցեղին հոգւոյն և ապրումին մէջ:

Այս համեստ գրութիւնը, իր հրաշագեղ մարգարէութեամբ, մանրանկարն է գալիք աշխարհասասան իրականութեան: **Մանրանկարն է ո՛չ թէ ԺԵ. դարու Զարթօնքին կամ Վերածնունդին, այլ աստուածախոհ և աստուածակերտ "Մեռելոց Յարութեան":**

1915-ի Մեծ Եղեռնի նահատակները ցեղասպան ողբերգութեամբ մը պիտի չ'անհետանան: Զարանենք ու կեղծաւոր ազգեր կը ջանան խաւարակուռ քար մը գլտորել մեր անգերեզման նահատակներու անմեռ յիշտակին վրայ և մոռացութեան կնքամոմով կնքել և ուրանալ իրենց ոճրագործութիւնները:

Համայն աշխարհ իսկ ուրանայ մեր արիւնպսակ նահատակներու կսկծալի և վաղահաս մահը, Աստուած Ի՛նք կը յիշէ: Ինչպէս Ան Յարութիւն տուաւ Իր Միածին Յիսուս Քրիստոսի, նոյնպէս ալ պիտի յարուցանէ իւրաքանչիւր հաւատաւոր նահատակը: **Մոռացութեան և ուրացումի վիթխարի քարը պիտի գլորի և յաւերժութեան յոյս հաւատքով ննջող աչքերը պիտի արթննան յաւերժացնող Արշալոյսին:**

Այս հաւատքով, այս վստահութեամբ քալեցին մեր պապերը և մայրերը դէպի Գողգոթա՝ Տէր Զօր, որովհետեւ Գողգոթայէն անդին անոնք տեսան **Յարուցեալը, Կեա՛նքը և Ճշմարտութիւնը:**

Ապրիլ 24, 1994
Թորոնթօ
Ա. Նորատունկեան

ԱՊՐԻԼ Է ԴԵՌ...

Ապրիլները պիտի գան երամ երամ ու անցնին:
Հայուն համար կը մնայ սակայն Ապրիլ մ'որ չ'անցնիր:
Ապրիլը այդ չունենայ պիտի երբեք վերջ ու ծիր
Ու հայն, աւա՛ղ, չունենայ պիտի Մայիս բնաւին:

Մայիսը վառ պիտի գայ ճնճուղներու իր պարով
Ու համերգով: Բայց հայուն համար Ապրիլ է ան դեռ:
Արե՛ւ արե՛ւ բողբոջին պիտի ծառեր ու դաշտեր,
Բայց հայուն սիրտը, ափսո՛ւ, դեռ ապրիլեան սուգ է ծով:

Ապրիլ է դեռ... Եւ պիտի դեռ չունենանք մենք Մայիս,
Մինչեւ այն օրն արջալոյս, մինչեւ այն օրը մայիս,
Երբ անմայիս մեր հողերն ու մեր հողերն ապրիլեան

Յառնեն իրենց համասոյգ երկար բունէն ու նորէն
Ծլին կանաչ առ կանաչ և հարսի պէս մայիսնան:
Լոկ ա՛յն առեն պիտի գայ հայուն Մայիսն, ա՛յն առեն,

Եւ այնուհետ ամէն մէկ Ապրիլ Մայիս կը դառնայ...

--Ժագ Ս. Յակոբեան

“ԱՅՍ ՈՍԿՈՐՆԵՐԸ ԿՐՆԱ՞Ն

Կ Ե Ն Դ Ա Ն Ա Ն Ա Լ՞

Վերոյիջեալ հարցաւորը՝ Աստուած Ինձն է: Միթէ Աստուած Իր ընելիքը չի՞ գիտեր, կամ խորհուրդի՞ կը կարօտի: Մեզմէ Բանինե՞ր, մեզմէ աւելի տկարին, անգէտին, կամ նուաստին խորհուրդ կը հարցնեն: Այլոց թելադրութիւնը որքան ալ իմաստուն ըլլայ, միթէ մտիկ կ'ընեն՞: Մինչ-դեռ այս պարագային, Աստուած Ինձ կը յօժարի, կը փափաքի լսել և գիտնալ թէ մարդ՝ Իր սիրած էակը, ի՞նչ կը խորհի և ի՞նչ պիտի թելադրէ Իրեն: Ի՞նչ մտերմութիւն...: Առանց մարդու Աստուած *չուզէր*: քան մը ընել, իսկ առանց Աստուծոյ, մարդ քան *չկրնայ*: ընել:

Ի՞նչ դիտաւորութեամբ Աստուած, այսքան մօտեցում և մտերմութիւն կը յայտնէ Իր մարդ-արարածին: Աստուած կը բաղձայ գործակից ընել մարդը Իրեն, նոյնիսկ աստուածացնել՝ զայն մղեալ Իր սէրէն:

Աստուած ինչո՞ւ համար անձայն, անկենդան նիւթը՝ հողաջէն էակ մարդը, կը բարձրացնէ և անոր Ի՛ր կերպարը կու տայ: Աստուածակերպ մարդն ալ ի՛ր կարգին, կը Բաղէ տիղմէն ծլած անհրապոյր եղէգ մը և իր ջունչը փչելով զայն կախարդիչ նուագարանի մը, հմայիչ սրինգի մը կը վերածէ: Այլապէս, մարդն ալ իր կարգին ստեղծագործ դարձած է իրմէ աւելի խոնարհը մարդկայնացնելու և խօսուն դարձնելով զայն: Մարդկային այս նկարագիրը և այս հնարագիտութիւնը մարդ-արարած կը պարտի աստուածային հպումին՝ ծունչին:

Բազմադարեան մարդը ականատես եղած է մահուան ու կոտորածի, ջարդի և եղեռնի բայց չէ հաշտուած այն ժխտական եղելութեան, որ մահ, Բայճայում և դէպի հող ու անյայտութեան վերադարձ կը կոչուի: Վաղ անցեալ դարերու Բարանձաւի մարդը, անգրագէտ ու քիրտ, կիսամերկ ու կարմրամորթ վայրենի կոչուած մարդն իսկ, չէ կրցած հաշտուիլ մահուան ցուրտ իրականութեան հետ: Ինչո՞ւ, որովհետեւ երկնային գիտակցութեան կայծը ունի ան իր ներաջիսարհ կոչուած *մտածումի* և *խորհուրդի*: տիեզերքին մէջ:

Մարդկային կեանքը մետաղի կամ մարմարի գոյութիւն մը չէ, բոյս մը կամ ծառ մը չէ, անբան անասուն մը չէ: Մարդկային կենցաղավարութիւնը բանական, ինքնագիտակից և զգայուն կեանք մը և ապրում մըն է: Զգայնութեան փորձառութիւն մը և յարաբերութիւն մըն է Արարիչի և արարածի միջեւ: Ընկերակցութիւն մը և դաջնակցութիւն մըն է *հոգեղէնի* և *Հոգեղէնի* երկրաւորի և երկնաւորի միջեւ: Հողէ եղէգի մը և Հոգեղէն Արնգահարի մը միաձուլումն է մարդկային կեանքը:

Եզեկիել Մարգարէն արուեստագետի բազմադէմ գունագեղ վրձիններով կը գեղանկարէ իր հոգեղէն տեսիլքն ու յայտնութիւնը: Որպէս Բահանայ և միջնորդ, ան կը մեկնաբանէ անտեսանելին ու անդենականը պարզամիտ հասարակութեան: Եզեկիել մարգարէ կը պատմագրէ երկնառաք տեսիլքը իր մարգարէաշունչ ֆերթուածին 37-րդ գլխուն մէջ ըսելով.

Տէրոջը ձեռքը իմ վրաս եղաւ

“Տէրոջ” բառը բնագրին մէջ “Յաւիտենական”ի նշանակութիւնը ունի և մատնացոյց կ’ընէ Անժամանցելին: Այն էութիւնը որ ստեղծուած էակ մը չէ՛, այլ՝ գոյութեան Տէրն է կամ Ինքն իսկ է Գոյութիւնն:

“Ձեռք” բառը կենդանիներուն թաթ բառէն բոլորովին տարբեր իմաստ և նշանակութիւն կը յայտնաբերէ: “Թաթ”ը՝ իր ճանկերով միջտ *մահ* կը նշանակէ: Կորսնցնելու, բզփտելու և նուաճելու համար միայն կը գործածուի, և ժխտական իմաստ կը կրէ: Իսկ “ձեռք” բառը “կեանք” կը նշանակէ և ստեղծագործութիւն: Ձոր օրինակ կ’ըսենք, *ձեռաբոլակ* ձեռագործ կամ ձեռակերտութիւն: Ձեռքը միջտ դրական իմաստ ունեցած է: Օրհնութեան և բազմացումի տպաւորութիւնը կը թողու: Օրինակի համար “ձեռնադրութիւն” պաշտօն կամ իշխանութիւն տալ կը նշանակէ, օրհնութեան կամ առաւելութեան մը իմաստը կը կրէ:

Նորակարծ բժիշկ կամ փաստաբան մը, վարպետի մը “ձեռնասունը” կ’ըլլայ: Այդ վարպետին ձեռքին տակ կ’ուսանի, կը վարժուի և կը կրթուի: Բժիշկներ, գիտնականներ, դերասաններ և արուեստամշակոյթի բազմաթիւ ուսանողներ մեծ հպարտութեամբ կը ճառեն թէ իրենք այսինչ հոչակաւոր վարպետին կամ դաստիարակին “ձեռքին” տակ իրենց աջկերտութիւնը ըրած են: Իրենց համար առանձնաշնորհում մը կը նկատեն այդ հանճարեղ ձեռքը որ իրենց կեանքին ու ասպարէզին ուղղութիւն և յաջողութիւն տուած է:

Հաւատացեալներ կը համբուրեն իրենց կրօնաւորներու ձեռքը որ փոխաբերական Ձեռքն է Յիսուսի՝ որ օրհնած էր մանուկները, բազմացուցած հացերը, բժշկած կոյրերն ու հիւանդները, խուլերն ու դիւահարները, յարուցած մտեալները և ի վերջոյ խաչափայտին վրայ բազկատարած գամուած ու արիւնալից ձեռքերը թողութիւն շնորհած էին Իր դահիճներուն ըսելով.

«Հայր, թո՛ղ դոցա, զի ոչ զիտեն զինչ գործեն»:

Զիս հոգիով հանեց,

Բնագրին մէջ “հանեց” բառը որ գրաբարի մէջ *հան* թարգմանուած է,

ունի նաեւ *տարաւ, կրեց, և փոխադրեց* իմաստը:

“Հանել” կը նշանակէ դուրս բերել: Բունուած վիճակէն, կղպուած պահարանէ կամ բանտէ դուրս հանել: Ազատագրել և անկախութիւն շնորհել: Նախապաշարումներէ, մոռլլ անհաւատութեան աղջամուղջէ դէպի լոյս և պայծառութիւն հանել: Առեղծուած մը իմանալի դարձնել:

Իսկ “տարաւ” բառը ժխտական նշանակութիւն ալ ունի: Օրինակի համար կ’ըսենք, այսինչ մարդը *տարաւ եցաւ*, այսինքն խաբուեցաւ: Կարգ մը մարդիկ որ մակերեսային գիտութիւն ունին շուտ կը *տարաւի*, ուրիշներու խօսքով, գրապարտութեամբ կամ խաբէութեամբ:

Իսկ ոմանք սրտի և հոգւոյ մաքրակենցաղ վարժութեամբ կամ ջերմ սիրոյ համար, նման Նադանայէլ աջակերտին, կը տարուին դառնալ Յիսուսի աջակերտ:

«Եւ Հոգին զիս վերցուց տարաւ, ու ես իմ հոգիիս տաքութենէն դառ նութեամբ գացի.ու Տէրոջը ճեռքը իմ վրաս եղաւ գորութեամբ» --Եզէկ. 4.4.

Խորհդաւոր և մտածողութեան արժանի գրութիւններ են վերոյիշեալ խօսքերը: Մարգարէներու, սուրբերու և առաքեալներու խօսուն փորձառութիւններն են անոնք: Որովհետեւ արդի մարդը՝ 20-րդ դարու գիտարուեստի մասնագէտ կալանաւոր մարդ արարածը, զուրկ է ու թերահաւատ հոգեկան ելոյթներու: Ան կը ջանայ շօշափելի իրողութիւնները միայն այլաբանօրէն մեկնել, ու ճշմարտութիւնները Բօղարկել. երբեմն որպէս ընդդիմադիր, և երբեմն ալ որպէս անգէտ ու նախապաշարեալ:

Ու զիս դաջտին մէջ գրաւ:

Մարդիկ ընդհանրապէս չեն սիրեր դաջտի մէջ մնալ: Մարդկային սլացքը դէպի լեռներն են ու անոնց բարձունքները և զագաթները: Հայերէնի մէջ, ըստ Հր. Աճառեանի, “դաջտանալ” հարթուիլ և խոնարհիլ կը նշանակէ, որ մեզի հայ մնացորդներուս Տէր էլ Զօրի արեակէզ անապատները կը յիշեցնէ:

Յիսուս երբ Նիկողեմոսի հետ կը խօսեր, ըսաւ անոր.

«Հովը ու՛ր որ ուզէ կը փչէ»:

“Հով” բառը որ նաեւ *հոգի* ալ կը նշանակէ, իր ուզած տեղը կը տանի, կը դնէ, կը կրէ և կը փոխադրէ մարդը: Վերոյիշեալ համարին մէջ Եզեկիէլ մարգարէն, կը տարուի ու կը դրուի դաջտի մը մէջ, ուր միայն աւազ և մարդկային ոսկորներ կային:

Եւ անիկա ոսկորներով լեցուն էր:

Գրաբարի թարգմանութիւնը աւելի յատկանշական է, որովհետեւ աւելի պատկերալից է ու լրացուցիչ.

«Եւ ան լի էր ոսկերով մարդկան».

Մարգարէին տեսածները ոչ թէ անասուններու դիակներէ մնացած ոսկորներ էին, այլ՝ *մարդկայի՛ն* մարմիններու մասունքներ: Ոսկորներ որ յաւիտենական տարածութեան և միջոցին մէջ ունէին զգացում, գիտակցութիւն, բանականութիւն և մարդկային ապրում: Ապրում մը որ իր մտածումներով ու խորհրդածութիւններով, իր ներատեսութեամբ ու ներաշխարհով, իր երազներով ու տեսիլքներով անաւարտօրէն ու յանկարծ կասեցուած էր:

Արդեօք կարելի՞ է որ աստուածային ու յաւերժական կայծաստորագելիները ֆօղարկուին անապատային աւազով ու երբեք չյառնեն: Երբ քիչ մը անդին անբան ու անմիտ խոտի սերմ մը իր գլուխը կը բարձրացնէ դէպի երկինք, ջնորհակալութիւն յայտնելու և ողջունելու արեւածագի ջողերը:

Եւ զիս անոնց բովերէն պտըտցուց ջուրջանակի:

Մարդիկ ընդհանրապէս զուարճութեան տեղեր կը պտըտին, թատրոն, պարասրահ, բախտախաղ, ձիարշաւ կամ հաճոյքի այնպիսի վայրեր, ուր կարենան մոռնալ մահը որ կը սպառնայ իրենց, իրենց գործած ազահութեան և ընչափադցութեան համար:

Սակայն Աստուած չ՛ուզէր որ Իր գործակատարները ըլլան թմրեցուցիչի մոլիներ անձնատուր ընելով իրենք զիրենք զուարճութեան և հաճոյքի: Այս չի նշանակեր, թէ մարգարէ մը կամ առաքեալ մը չունի իրեն յատուկ զուարճութիւնն ու հաճոյքը:

Մարգարէն, առաքեալը և այն ծառան, որոնք կ՛ուզեն սպասաւորել Աստուծոյ և Աւետարանին, կամենալու են զգալ և գիտակցիլ իրենց կոչումին և անոր *ամբողջական* նշանակութեան: Որքան ալ տառապանքն ու ցաւը կեանքի ժխտակա՛ն մասերն են, սակայն և այնպէս, կեանքի այն բաժինն ալ են, ուր մարդ իր թմբիրէն կ՛արթննայ և կը թօթափէ իր անտարբերութիւնը:

Կանտիի հարաւային Ափրիկէ ըրած ջոգեկառփի ճամբորդութիւնը, որու ընթացքին սպիտակամորթները զինք դուրս նետեցին վակոնէն, Կանտիին դարձուցին ազատութեան ռահվիրայ ու Հայրիկը հնդիկ ազգին:

Պուտտահ՝ իր երիտասարդութեան, իր դղեակի արուեստական կեանքէն ու ապահովութենէն երբ դուրս դէպի իրական կեանքի ցաւի՛ն, անօթութեան, հիւանդութեան, աղբատութեան և մահուան ծանօթացաւ, ուրանալով իր

կեանքի հանգստութիւնը, հարստութիւնը և հաճոյքները, ընտրեց ցան ու վիշտը, որոնք զինք թրծեցին ու դարձուցին **Պուտաահ՝** Արեւելի բազմաթիւ ազգերու մտքին և հոգիին լուսաւորիչը:

ԱստուածՆորդի Յիսուս, յայտնաբերելու համար Իր Հօր սերն ու ողորմութիւնը հանդէպ մարդկութեան, հրաժարեցաւ Իր երկնային խաղաղութենէն և փառքէն ու ապրեցաւ բաժնեկցելով մարդկութեան դառն ու դաժան կենցաղավարութիւնը:

Դիտե՛նք Յիսուսը՝ *մարդկայի՛ն* դիտանկիւնէն.

«Անիկա կերպարանք կամ վայելչութիւն չունէր որ անոր նայէինք:

Անիկա մարդոցմէ անարգունցաւ ու երեսէ ծգունցաւ վիշտերու տէր ու ցաւերու տեղեակ նդաւ.

Անիկա մեր ցաւերը վերցուց

Ու մեր վիշտերը իր վրայ առաւ.

և մենք զանիկա վիրաւորուած, Աստուծմէ զարնուած

Ու չարիքի հանդիպած սեպեցինք»:--Եսայ. 53. 2-4

Պետրոս առաքեալ՝ իր հարազատ վկայութիւնը կը բերէ մարդկային պատմութեան դարաւոր էջերուն և կ'ըսէ.

«Ան՝ (Յիսուս) որ իր մարմինով մեր մեղքերը վերցուց խաչափայտին վրայ, որպէսզի մենք զերծ ըլլանք մեղքերէ և ապրինք արդարութեան համար: Ան՝ որուն վերքերով բժշկուեցաք դուք»--Ա. Պետ. Բ. 24:

Կուզե՞ս ելլել զքօսապտոյտի, ելի՛ր հոգիով ու տես տառապեալներն ու ցաւէ տանջուողները: Եղի՛ր որպէս կամաւոր այցելու հիւանդանոցի և ծերանոցի: Ձեռք տուր ինկածին և կեանքի արկածեալին: Մրբէ արցունքը որբին ու հարստահարուածին: Միայն ա՛յն տեսն պիտի ճանչնաս կեանքը և դառնաս բուժիչ բալասանը ցաւի և տառապանքի: Ամոհելով մարդկային ցան ու վիշտը պիտի զգաս երկնային ցնծութիւն և աստուածային ուրախութիւն:

**Ահա անոնք գաջտին երեսին վրայ խիստ ջատ էին, և
ահա անոնք խիստ չորցած էին:**

Երբ սեւեռեմք մեր աչքերը հեռասեսիլի կախարդիչ կենցաղա-

վարութեան, այնպէս կը կարծենք որ մարդկային կեանքը իր երանելիութեան գագաթնակէտը հասած է: Բայց աստու, որ իրական կեանքը տակաւին այն է ինչ որ էր դարեր առաջ: Տաւն ու տառապանքը խիստ շատ են: Միակ տարբերութիւնը, մակերեսի ջլապրն է որուն ապացոյցը կրնաք տեսնել արեւմտեան մեռելաթաղերու դագաղներու մէջ ննջող դիակներու դէմքերուն վրայ:

Կրօզէ՞ք ճանչնալ շլացուցիչ իրականութիւնը կեանքին, անձամբ պտոյտի գացէք հիւանդատեսի և մոռցուածի մը սնարին:

Ու ինձի ըսաւ,

Ինչ առիւննող զգացում և հաճելի վերացում է երբ Աստուած քեզի խօսի: Մարդիկ որքա՞ն հպարտ կը զգան երբ կառավարական պաշտօնեայ մը իրենց հեռաձայնէ: Մանաւանդ երբ այդ անձը նախարար մը ըլլայ, կամ վարչապետ մը:

Երբ հետեւինք տառապող մարդոց, հո՞ն պիտի նշմարենք ոտքի հետքեր որոնք մեզմէ առաջ այցելութիւն տուած են սոյն թշուառներուն: Եթէ հետեւինք այդ Ռտնահետքերուն, պիտի տեսնենք զԱստուած: Պիտի տեսնենք զԱստուած այդ տառապակոծ ողորմելիներուն բով, մոռցուածներուն մէջ, ու այդ կոտտացող ցաւին ու զրկանքին ընդմէջէն պիտի լսենք ձայնն Աստուծոյ:

Որդի մարդոյ,

Ճատ մը կամաւոր գործիչներ կ'ուզեն յատկացնել իրենց ծառայութիւնները և նուիրումները ի փառս իրենց ազգին կամ ցեղին: Աստուած այդ կամաւորները կը ճանչնայ միայն մէ՛կ անուամբ՝ որ է **«որդի մարդոյ»**: Ոչ թէ որպէս "Հայու" որդի, "Ֆրանսացիի" որդի կամ "Ամերիկացիի" որդի: Ոչ ալ "Ռամկավարի" որդի, "Համայնավարի" որդի: Որովհետեւ Աստուծոյ համար, համայն մարդկութիւնը մէկ է:

Այս ոսկորները կրնա՞ն կենդանանալ:

«Կենդանանալ» բառը իր ամբողջական իմաստով՝ **«ապրիլ»** կը նշանակէ, թրքերէն «եաջամաք»: Հայերէնի մէջ բուն արմատը «կեա»ն է, որմէ սերած են *կեալ, կեաց և կեամ*: Այս արմատէն կու գայ խաղաղակեաց կամ երկարակեաց բառերը:

Վերոյիշեալ բացատրութեան պատճառը այն է, որ մարդկային կեանքի կենդանութեան բուն իմաստը, ոչ միայն «գոյ» ըլլալն է, այլ «ապրիլ»ն է: «Կենսական» բառն ալ «կեանք» բառէն յառաջ կու գայ և մարդկային կեանքին կենսունակութիւն կու տայ: Զոր օրինակ, մարդիկ Փարիզ կ'երթան կեանքը

ապրելու համար: Կերթան խաղարանները և գիշերային հաճոյատեղերը, ու կ'ըսեն «կեանք վայելեցին» կամ «կեանք տեսանք»: Մաղմնային գոյութիւնը որ արգանդին մէջ չի *շարժիր* մեռած կը նկատուի:

Նոյնպէս Աստուած կեանք չի տար որ այդ անշարժ գոյութիւն մը շարունակէ, այլ՝ այդ կեանքը շարժումի շինարարական ու կենարար նպատակներու փոխակերպէ: Իսկ եթէ մէկ տաղանդ ունեցող պաշտօնեային նման, մեր կեանքը (տաղանդը) հողի տակ պիտի անշարժացնենք, պիտի կոչուինք. "Մոյլ և անպիտան ծառայ":

Կ'ուզե՞նք մեր ազգը վերականգնել, կ'ուզե՞նք մեր մշակոյթին վերածնունդ տալ, կ'ուզե՞նք մեր եկեղեցին ու հաւատքը յարուցանել իր թմբիրէն, շարժման դնելու ենք մեր գաղութը հոգ չէ թէ անոնք շատ չորցած կամ անկարելի թուին կարգ մը «Թոմասներու»:

Ինչո՞ւ հաւատալ ազգային ու անհատական վերածնունդի և հոգեւոր արթնութեան: Որովհետեւ հարցում ընողը Աստուած Ինքն է: Մենք պարտաւոր ենք անկասկած դրական պատասխան տալ Իրեն, որովհետեւ Ան կարող է ոչ միայն մարդը ոսկորներէն վերակենդանացնել, այլ՝ նոյնիսկ *հարելէն*, ազգ մը վերստեղծել:

Ու ըսի, Ով Տէր եհովա, Գու՛ն գիտես:

Մարգարէն, Աստուծոյ իրեն ուղղած հարցումին կը պատասխանէ, «Գու՛ն գիտես»ով: Այսպէս պատասխանելով, մարգարէն ինքզինք ոչ թէ պատասխանատուութենէ դուրս ըրած կ'ըլլայ, այլ՝ զԱստուած մեծարած:

Ինչո՞ւ:

Որովհետեւ «գիտնալ» բառը իր մէջ խորունկ իմաստներ ունի որ աւելի Արարիչի վայել է քան թէ արարածի: Այս բառին արմատը «գէտ» բառն է, որմէ կու գայ «գիտակ, գիտուն, գիտցող» նաեւ, «կախարդ, հմայող և փողոյեայ» բառերը:

Մինչեւ չորրորդ դար, Քրիստոնէական շարժումին մէջ կար աղանդ մը, որ թէպէտ ունեցաւ իր օգտակար նպաստը հաւատացեալ և ուսեալ դասին, նոյնպէս նաեւ ունեցաւ իր վնասները: Այս աղանդը կը կոչուէր «գնոստիկեան» այսինքն «ճանաչական» (gnostic): Այս աղանդին հետեւողներ այնպէս կը հաւատային որ *միայն իրենք* ունին ճշմարիտ և իրական հաւատքն ու գիտութիւնը:

Գիտնալ և ճանչնալ բառերը Ս. Գրքին մէջ գործածուած են որպէս ծանդագործիչ և ստեղծիչ իմաստներով ալ. «Եւ Ադամ գիտցաւ իր կինը Եւան, ու ան յղացաւ»: Գիտնալ բառը նոյն իմաստով գործածած են նաեւ Պղատոն և Արիստոտել:

Հետեւաբար «գիտնալ» ստորոգելին որ կը խորանայ իր իմաստին և

նշանակութեան մէջ մինչեւ ստեղծագործութիւն, մարգարէին տուած պատասխանը պատշաճ է ու արժանավայել:

Եւ ինձի ըսաւ.

Ինչ հովուերգութիւն և տրամախօսութիւն յաւիտենական Արարիչին հետ...: Անպարունակելի և Անմերձեանալի Աստուած կ'ընկերանայ Իր արարածին, ման կու գայ անապատին մէջ ջրջելով մարդկային գանկերու շուրջ և հարցազրոյց ունենալով Իր ստեղծած մարդուն հետ: Այս պատճառաւ է, որ մարգարէաշունչ Նարեկացին եւս կ'ըսէ, *«Անմատչելիօրէն հեռաւոր և անընդմիջելիօրէն մերձաւոր»* այն Աստուծոյ, որուն փորձառութիւնը ունեցած էր իր խօլական մենութեան մէջ:

Այս ոսկորներուն վրայ մարգարէութիւն ըրէ ու անոնց ըսէ.

«Մարգարէ» բառը ապագան գուշակող իմաստուն ըսել է: Մանիքէնական աղանդը որուն անդամակցած էր Ս. Օգոստինոս նախ քան Յիսուսի հաւատալը և մկրտուիլը, իրենց մատենագրութեանց մէջ «մարգրէ»ն, «գուշակ»ն ու «վհուկ»ը նոյն իմաստով կ'արտայայտէին: «Մարգարէ» բառը իր ոգեկան իմաստին մէջ ունեցած է մոգական և ծիսական յատկութիւն և հանգամանք: Մենք հայերս «մարգարէ» բառը գրադաշտական կրօնքէն փոխ առած ենք, այդ պատճառաւ Աւետարանը և աղօթագրքերը եղանակելով կը կարդանք թէ՛ պատարագի ընթացքին և թէ՛ հիւանդի մը սնարին շուրջ իրեն արողջութիւն և բժշկութիւն մաղթելու ատեն:

Աստուածային վերոյիջեալ պատուէրը, ուղղուած մարգարէին, մեզի որքա՞ն անտրամաբան կը թուի ըլլալ: Որովհետեւ մենք բնական տարածութեան էակներ ենք ու Գերբնական զօրութիւններու և օրէնքներու անհաղորդ: Բնական մարդը չի՛ հաւատար, ոչ ալ հաւատալ կ'ուզէ: Բայց անոնք, որոնք քաղած և խօսած են Աստուծոյ հետ, ականատես եղած են Գերբնական զօրութիւններու, դէպքերու և եղելութեանց:

«Գերբնական» բառը *անբնական* չի՛ նշանակեր, այլ՝ աւելի՛ բարձր, աւելի հզօր: Ամենօրեայ խօսակցութեան մէջ յաճախ կը գործածենք «գերագոյն» «գերապայծառ» կամ «գերիմաստ» բառերը: Միթէ սոյն բառերը մեզի անտրամաբանակա՞ն իմաստ կու տան: Նոյնպէս նաեւ, աստուածային պատուէրը հաւատացեալին ականջին անտրամաբան թուելու չէ:

Մարգարէն չի պարտաւորուիր միայն մարգարէանալ, այլ՝ նաեւ խօսիլ այդ չորրցած ոսկորներուն: Ձեզմէ ոմանք տեսած ըլլալու են ջուրի մէջ լողացող կրիայ մը: Եթէ պատահի որ օր մը կրիան իր ձուկ աղբարիկին բացատրէ ջուրէն դուրս ցամաքակենդան աշխարհի ապրելակերպը, ուր ծառեր և

բուսականութիւն, կենդանական աշխարհ և թռչուններ, աստեղազարդ երկնակամար արեւ և լուսին կայ, կը կարծէ՞ք որ ձուկ աղբարիկը պիտի հաւատայ կոկոզաբան կրիային...:

Նոյնն է պարագան նաեւ մարգարէին: Մարգարէն որ կ'ապրի այս բնական աշխարհին մէջ, է՛ նաեւ երկակենցաղ: Մարգարէն ունի երկնային տեսիլք և ապրում մը եւս, որմէ սովորական մահկանացուներ զուրկ են: Պօղոս Առաքեալ իր մէկ նամակագրութեան մէջ կը յայտնէ իր երկինք փոխադրուիլն և ըմբռնելը հոգեկան անսահմանօրէն կախարդիչ զմայլումի վայելքը: Մարգարէն այն անձն է, որ անտեսանելին ու գերմարդկայինը՝ տեսանելի և բնական կը դարձնէ մահկանացու մարդուն: Իր պաշտօնը ծառայել է Աստուծոյ հաւատարմօրէն, հոգ չէ որ մարդիկ զինքը ծաղր ընեն, երազող կարծեն և կամ անտրամաբան գտնեն: Անոր առաքելութիւնը Աստուծմէ է և ոչ մարդոցմէ:

Ով չորցած ոսկորներ, Տիրոջը խօսքը մտիկ ըրէք:

Պահ մը երեւակայեմք մենք զմեզ հովիտի մը մէջ, ուր հորիզոնէ հորիզոն աւազ է և լեցուն մեռած մարմիններու ոսկորներով: Այսպիսի դրութեան մը մէջ երբ իմանաք մարգարէի մը արձագանգող ձայնը որ կը խօսի այդ ոսկորներուն: Ի՞նչ պիտի ըլլայ ձեր դիրքը և կեցուածքը այս անապատի «ձայն բարբարոյ»ին:

Այս էր կոչումը Եզեկիէլ մարգարէին: Խօսիլ մեռա՛ծ մարդոց, չորցած ոսկորներուն: Ի՞նչ դժուար և հոգի մաջեցնող առաքելութիւն և պաշտօն: Որքան յուսահատական է մարգարէի մը, քահանայի մը, վարդապետի մը, քարոզիչի մը կամ դաստիարակի մը աշխատանքն ու տփնութիւնը: Խօսիլ թերահաւա՛տ հաւատացեալներու, նախապաշարեա՛լ մարդոց, հոգեպէս մեռած-ներո՛ւ և անզգաներու:

Այսպէս կ'ըսէ Տէր Եհովա այս ոսկորներուն.

Մարգարէին ու կղերին իջխանութիւնը վերէն կու գայ: Կու գայ Աստուծմէ: Մարգարէն կամ հոգեւորականը ոչ թէ ի՛նչ որ ուզէ ա՛յն կը խօսի, կամ մարդոց կողմէ իրեն հրահանգուածը կը խօսի, այլ՝ գերագոյն Հրամանատարէն՝ Երկինքէ՛ն եկած պատգամը կը խօսի: Տէր Եհովայի պատուէրը և խօսքերը, որովհետեւ այդ խօսքերուն ետին զօրութիւն, կեանք, ոյժ և ջարժում կայ:

Աստուծոյ «Եհովա» անունը որ ջատ քիչ անգամներ թարգմանուած է, կը նշանակէ «Ես եմ» կամ «Ես ան եմ, որ եմ» կամ «պիտի ըլլամ ինչ որ եմ» անկախաբար որեւէ գոյութենէ և զօրութենէ մղեալ: Հրեայ

մատենագիրներ՝ մոգական ուժ և զօրութիւն նախատեսելով «Եհովա» անունին մէջ, զգուշացան այդ բառը արտասանելէ և անոր փոխարէն սկսան գործածել «Տէր» բառը: Այս պատճառաւ «Եհովա» բառին հնչականութիւնը կորսուած է: Որովհետեւ եբրայական գիրերը ձայնաւոր տառեր չունին:

Ահա ես ձեր մէջ հոգի պիտի գնեմ,

Վերոյիշեալ խօսքերուն մէջ մեզ հետաքրքրող կէտը աստուածային խոստումն է: Յուսարդութիւն մը, որուն ետին կայ զօրութիւն, կարողութիւն և անսպառ սէր, որ կու գայ Արարիչ Աստուծմէ:

Նախնական մարդու համար «հոգի, քամի, շունչ և հով» միեւնոյն տեսութիւններն էին: Յունարէն, եբրայերէն և ասորերէն «ոգի և հով» բառերը նոյնն են ինչպէս հայերէնը: Լատիներէն *անիմա* բառը «ոգի կամ հոգի» կը նշանակէ, իսկ *անիմա* «հով կամ շունչ»: Յիսուս՝ Նիկոդիմոս աստուածաբանին հետ խօսած ժամանակ ըսաւ, «*հովը ուր որ կ'ուզէ կը փչէ*», որ նաեւ կրնայ թարգմանուիլ «հոգին ուր որ ուզէ կը փչէ»:

Անգլերէն *gaseous* բառը որ «օդային» կը նշանակէ, կը շարժէ ու կ'աշխատցնէ 20-րդ դարու ճարտարարուեստի բոլոր ինքնաշարժ մեքենաները: Դադրեցու՛ր այս *օդային* կոչուած վառելանիւթը, 20-րդ դարը անմիջապէս կը փոխադրուի միջին և իսաւար դարերու լճացած և անշարժ վիճակին: Աստուածային խոստումը՝ մարդը *ջարժեալ* մէջ կը դնէ: Առանց Աստուծոյ հպումին, մարդկային կեանքը անշարժութիւն է, լճացում և քայքայում: Աստուած ոչ միայն ստեղծիչ է, այլ նաեւ անփոփոխ Խնամակալ և մշտնջենական և անհուն Պահապանն է Իր արարածներուն:

Ու պիտի կենդանանաք:

Որքա՛ն դրական է և ստոյգ Աստուծոյ խօսքը: Աստուած չ'արտայայտուի «կարելի» է կամ «կրնայ» ըլլալներով: Աստուածային զօրութեան *գիտութիւնը* անմահութեան արմատն է: Երբ անձ մը որպէս մարգարէ իր կեանքը Աստուծոյ հետ հաղորդութեամբ և յարաբերութեամբ կ'ապրի, կը դառնայ երկակենցաղ, թէ՛ երկնային և թէ՛ երկրային տարածութեան: Մարգարէն, նման կամուրջի, միջնորդն է քացատրելու յաւիտենականն ու Անժամանցելին, ժամանակաւոր մարդուն, և Անճառելի Մեծութիւնը՝ սահմանաւոր աստուածակերպարին:

Եւ ձեր վրայ ջիղեր պիտի գնեմ,

Ճերմկած ոսկորներ որոնք կրծուած ու փետուած են անասուններու և թռչուններու կողմէ պիտի վերահաստատուին ու վերակազմուին ջիղերով: Զիղ՝ փոխաբերաբար կը նշանակէ նաեւ «ուժ, զօրութիւն և կորով»: Աստուած

մարդը պիտի վերակենդանացնէ և անոր պիտի շնորհէ ջիւ, կորով և առնականութիւն: Մարդ այլեւս պիտի չըլլայ ժամանակի և դիպուածի արկածեալ մը, զոհ մը, այլ՝ տէ՛րը իր կեանքին և ապրումին:

Ու ձեզ միտով պիտի պատեմ,

Տեսա՞ծ է՞ սովաճար և անօթի գաղթականներ անապատի մէջ կամ բանտերու խորը: Անոնք միայն մորթ և ոսկորի տոպրակներու կը նմանին: Իշխակներ կամ ստուերներ են, որոնց տեսքը սոսկում և սարսուռ կ'ազդէ դիտողի մը: Երեւոյթներ և կերպարանքներ, որոնք զուրկ են որեւէ գեղեցկութենէ և հրապոյրէ: Աստուած որ կեանքի մեծ Իրականութիւնն է, է՛ նաեւ Ակնադրբիւրը գեղեցկութեան և վայելչութեան: Աստուած կը ստեղծէ ոչ միայն գործնականը, այլ նաեւ ներդաշնակը, գեղեցիկը, հրապուրիչը, զմայլելին ու *հմայագեղը*:

Կ'ուզէ՞ք տեսնել զԱստուած որպէս մեծ Բանաստեղծ և Արուեստագէտ, դիտեցէ՛ք բնութեան յառաջ բերած գոյութիւնները, ըլլան անոնք ճաճանչագեղ բիւրեղներ և ճոռուղող թռչուններ:

Աստուած Իր բանաստեղծի հանգամանքով երբ նմանութիւն և կերպարանք շնորհէ Իր բարձրագոյն արարածին, անոր ոտքերը դէպի աստուածութիւն ելարանին կը հաստատէ, և գեղեցկութեան արկղէն կը շռայլէ ամէն տեսակ հրապոյր մարդ-արարածին: Այսպէսով մարդ կը դառնայ տիեզերքի գեղեցկագոյն չափանիշը--«The measure of all things»:

Ու ձեզ մորթով պիտի ծածկեմ,

Մորթը ջատ կենսական ծածկոյթ մըն է: Մորթագերծ ըրէ շնչաւոր կենդանի մը և ան արիւնահոսութենէ կը մեռնի: Մորթն է որ կը պաշտպանէ կեանքը արտաքին թունաւոր և ախտաւոր մանրէներէ: Պզտիկ ճեղք մը կամ կտրուածք մը, կարգ մը բծիջկներու ձեռքին վրայ, անոնց մահուան պատճառ դարձած է գործողութեան մը պահուն:

Զսաներորդ դարու դրամական մեծածախս գումարները զարդադեղի (cosmetic) նպատակներու կը սպառին: Ամէն ոք կ'ուզէ իր մորթը գեղեցիկ տեսնել և ցուցնել: Ասիկա աստուածատուր ցանկութիւն մըն է, թէեւ ոմանք չափազանցութեան կը տանին: Մակայն ինամբ չտանիլն ալ ժխտական ծայրայեղութիւն է:

Եւ ձեր մէջ ջունջ պիտի գնեմ, ու պիտի կենդանանար:

Աստուած մարդ-արարածը, որպէս գեղարուեստական արժեքաւոր առարկայ, թանգարաններու ցուցափեղկերուն համար, չէ ստեղծած: Մարդ ստեղծըւած է ապրելու և ուրիշները ապրեցնելու համար: Զրտնելու և աշխատելու

համար: Ծաղկեցնելու և ստեղծագործելու համար, ոչ միայն իր շրջապատը, այլ նաև իր անձը, իր եսը և իր իսկութիւնը: Այն վերելքի սանդուխը, որուն սեմին Աստուած գին՝ կանգնեցուցած է, քայլ առ քայլ ան պէտք է բարձրանայ և իր հետ բարձրացնէ ուրիշներն ալ մինչեւ որ հասնին աստուածութեան:

Միայն այդ հասունութենէն և հասողութենէն վերջ, մարդ կրնայ իրական գիտակցութիւնը ունենալ և ճշմարիտը ճանչնալ: Այս պատճառաւ մարգարէն կը ջարուհակէ և կ'ըսէ.

Եւ պիտի գիտնաք թէ ես եմ Տէրը:

Գիտնալ և ճանչնալ Տէրը, ճշմարտութեան հասնիլ է: Մարդիկ, մանաւանդ 20-րդ դարու մարդը, միշտ կ'ուզէ բան մը *ընել*: Բան մը շիտակ և ուղիղ ընելու համար, ենթական նախ բա՛ն մը *ըլլալու* է: Բժշկութիւն ընելէ առաջ՝ ուսանողը *բժիշկ* դառնալու է: Ծճմարիտը բացատրելէ առաջ՝ ճշմարտութիւնը (գԱստուած) ճանչնալու է: Միրոյ մասին ճառելէ առաջ՝ *սիրե՛լ* կարենալու է: Հաւատք քարոզելէ առաջ՝ անսասան հաւատացեալ ըլլալու է: Առաքեալ ըլլալէ առաջ՝ *աջակե՛րտ* ըլլալ հարկաւոր է:

Ինչո՞ւ տեղի ունեցաւ 1789-ին Ֆրանսայի Յեղափոխութիւնը: Ծատ մը պատճառներու կարգին, կար նաև գաղափարական և ֆիզիքական ըմբոստացում մը: Խուժան ամբոխը չկրցաւ ճանչնալ իր տէրերն ու նախարարները: Խուժանը չգիտցաւ և չճանչցաւ իր տէրերը, նախարարները և նոյն իսկ ուրացաւ իր թագաւորը: Հետեւաբար Ֆրանսական Յեղափոխութիւնը դարձաւ անիմաստ ջարդ և կոտորած, սպանդ և եղեռն:

Աստուծոյ տէրութիւնը կամ թագաւորութիւնը կը տարբերի աշխարհական վարչաձեւերէ սա էական գանազանութեամբ: Աշխարհի ներկայ ընկերա-ֆաղափական տէրութիւնները սուրբ կը գանձեն իրենց ֆաղափացիներէն: Այս սուրբի վճարումին շատ լաւ տեղեակ են Հիւսիսային Ամերիկայի բնակիչները: Իսկ երկնային Թագաւորութեան Տէրը ոչ թէ սուրբ կը պահանջէ, այլ՝ Ինքն է Տուհչը բոլոր բարեաց և կեանքի:

«Տէր» բառը կը նշանակէ սեփականութիւն ունեցող անձ և հովանաւորող Պաշտպան: Աստուծոյ Տէր ճանչցուիլը *բունաստիքութիւն* մը չէ, այլ *ազատագրութիւն* է: Մարդիկ կան որոնք կը զգուշանան գԱստուած իրենց Տէրը ճանչնալէ: Որովհետեւ այնքան դժբախտութեան հանդիպած են չարին կողմանէ, որ զգոյշ են ուրիշ Տէր ունենալու: Այս է պատճառը որ Աստուած սիրոյ և կարեկցութեան մօտեցումով կը մերձենայ մարդ-արարածին և Իր անձառ ֆաղցրութեամբ կը շնորհէ մարդուն Իր անսպառ բարիքները:

Այս էր հիմնական պատճառը, որով Վարդանանց Ասպետները պատասխանեցին Յազկերտ թագաւորին ըսելով

«Մենք մէկ Տէր կը ճանչնանք»:

Ու ես մարգարէութիւն ըրի ինչպէս ինծի հրամայուեցաւ,

Մարգարեանալ՝ **ներշնչուած** պատգամաբեր դառնալ է, աստուածային կամքն ու նպատակը արտայայտող: Չէ՞ որ Աստուած հոգի է, և «հոգի ու ջունչ» բառերը եբրայերէնի, պարսկերէնի, յունարէնի և հայերէնի մէջ նոյն իմաստը կը կրեն և նոյն նշանակութիւնը ունին: Ուստի երբ մարդ ներշնչում ունենայ, Աստուած մարդկային ջունչին միացած կամ որպէս մարդկային ջունչ և հով, մարդուն էութեան մէջ մտնելով ու խառնուելով անոր ֆիզիքական արեան, մարդ կը վերանայ և իր արտասանած (արտաշնչած) բառերը և խօսքերը կը դառնան ներշնչում և աստուածային զօրութիւն, իրագործելու Աստուծոյ կամքը:

Այս պատճառաւ Յիսուս սաստեց Իր աշակերտները (Յովհաննէսն ու Յակոբոսը) երբ անոնք ուզեցին երկինքէն կրակ թափել Սամարացիներուն վրայ, Յիսուս յանդիմանեց զանոնք և ըսաւ.

«Չէք գիտեր թէ ինչ հոգիի կը պատկանիք»:

Տարբեր թարգմանութեամբ.

«Չէք գիտեր թէ ինչ հոգիէ էք դուք»:--Ղուկ. Թ. 55:

Աշակերտները որ շատ մօտէն կը հետեւէին Յիսուսի, (նման հայ բանաստեղծ Վ. Թէֆէեանի, որ բերթողած է.)

«Ես աչքս գոց կը տեսնեմ ու կը շնչեմ»ը

շարունակ աստուածային ներշնչում ունէին: Աշակերտները իրենց աստուածային զօրութեան և սիրոյն անտեղեակ, ազգային մոլեռանդութենէ բռնկած, ուզեցին պաշտպան կանգնիլ իրենց Վարդապետին:

Վերադառնանք «մարգարէութիւն» կամ «մարգարէ» բառին: Մարգարէն՝ թարգմանն է անբովանդակելի Բնութեան կամ էութեան, որ սահմանումէ գերիվեր է ու կը կոչուի Աստուած: Մարգարէին յայտնութիւնները դատաստաններ և դատապարտութիւններ են անվախ և անվեհեր կերպով, նոյնիսկ ի վնաս իր անձին: Մարգարէն՝ ծառայելու համար իր Տիրոջ, դարձած էր բացառիկ անձնաւորութիւն մը: Ո՛չ մարդոցմէ կը վախնար և ոչ թագաւորներէ:

Այս է պատճառը վերոյիշեալ համարին, որուն մէջ մարգարէն կ'ըսէ. *«Ըրի ինչպէս ինծի հրամայուեցաւ».* Ոչ թէ որովհետեւ ինքզինք ստրկացուցած էր, այլ՝ վերացած էր կաւեղէնէ ու գիտակից էր աստուածային կամաց և զաղտնեաց: Նոյն կացութեան մէջ էին նաեւ Առաքեալները, երբ Պետրոս

առաքեալ վկայեց Սանհետրիմի դատարանին մէջ ըսելով.

«Պատասխանի ետ Պետրոս և առաքեալքն և ասեն, **“Հնազանդիլ պարս է Աստուծոյ առաւել քան մարդկան»** -- Առաք. Ե. 29:

Ու մարգարէութիւն ըրածիս պէս ձայն մը եղաւ.

Մարդ երբ աստուածային ներշնչումով և զօրութեամբ խօսի՝ այդ խօսքերը կը դառնան ճառագայթարձակ և ջողարձակ: Այդ խօսքերը կը հասնին իրենց կէտ նպատակին, և անպայման կը լսուի ձայներ, որոնք կ'արձագանգեն իբր պատասխան մարգարէաշունչ հակազդեցութեան: Աստուածային խօսքը երբ արտասանուի մարգարէի մը բերնով՝ արդիւնքը կ'ըլլայ անմիջական և կայծակնարագ:

Եւ ահա ջարժում մը եղաւ,

Ո՛րք Աստուծոյ ճոգին կայ, հոն ջարժում կայ: Պենտեկոստէի օրն իսկ.
«Էս յանկարծակի երկրիմէն ձայն մը հնչեց՝ սաստկաշունչ հովէն եկած ձայնի պէս. և լեցուց ամբողջ այն տունը» -- Գործ Առաք. Բ. 2:

Պենտեկոստէի օրը Քրիստոսի եկեղեցին ծնունդ առաւ, Սուրբ Հոգւոյն ժամանումովը: Եկեղեցին քարաշէն կամ աղիւսաշէն ճարտարապետութիւն մը չէր սկիզբը, այլ՝ **ջարժում** և **կեանք** էր: Առաքեալները հաւաքուած նստած էին վերնատան մը մէջ, հրեաներէն վախնալնուն համար: Յետ ճոգեգալուստի, անոնք նստած չմնացին, այլ հրապարակները և տաճարին մէջ սկսան անվեհեր կերպով վկայել և ճառել իրենց տեսածները և լսածները, իրենց Տէրն ու Փրկիչը Յիսուս Քրիստոս:

Գալիլեացի մարգարէին ափ մը աշակերտները այլեւս կերպարանափոխուած էին լուսարձակներու, որոնց պայծառութեան մէջ մեղաւորներ կը տեսնէին իրենց յանցանքները և ապաշխարութեամբ կը դառնային Յիսուսի, որ մօտ անցեալին խաչած էին: Հաւատալու, վերածնելու և փոխակերպուելու ջարժում մըն էր, որ սկսաւ որպէս եկեղեցի և Յիսուսի Մարմինը:

Ու ոսկորները իրարու մօտեցան՝ ոսկորը իր ոսկորին:

Մարգարէաշունչ հոգին երբ արտասանուի, այդ խօսքը բաժանումի կամ բայթայումի ջարժում մը չի ստեղծեր, այլ *միացումի* և հաշտութեան: Աստուածային սիրոյ ճոգին և ջունչը *հաշտարար* ջարժում մըն է, խաղաղութեան և համաձայնութիւն սատարող մթնոլորտ մը, ուր իւրաքանչիւր ոսկոր (անձ հոգեւորական կամ աշխարհական) իր դիրքը և սահմանումը կը ճշդէ և իրարու կը մերձենայ ոչ թէ պայքարելու, այլ **գործակցելու** համար:

Եւ տեսայ որ ահա անոնք ջիղերով ու միտով պատեցան,

Ի՞նչ մեծ ուրախութիւն և գոհացում է տեսնել աշխատանքիդ արդիւնքը և պտուղը: Մարգարէն ոչ միայն կը մարգարէանայ, այլ նաեւ ակնատե՛ս կ'ըլլայ ջարժումի մը որ իր լրումը պիտի ստանայ կեանքի վերածնունդով: Ի՞նչ մեծ երանելիութիւն:

Ու վրայէն մորթով ճածկուեցան,

Մորթն է կարծես որ մարդուն իր անձնական նմանութիւնն ու անհատական ինքնութիւնը կը պարզուէ: Վերցուր մորթը մարդոց մարմինէն, բոլորն ալ յար և նման իրարու պիտի նմանին առանց կարենալ զատորոշելու զանոնք: Ձե՛ր որ մարդկային մորթին վրայի (մատերու) գծագրութեան զանազանութիւնը իւրաքանչիւր անձը իրարմէ կը զատորոշէ: Ապա թէ ոչ ինչո՞ւ կառավարութիւնները մարդոց մատնադրոջմը կ'առնեն:

Աստուած որ իւրաքանչիւր ձիւնի փաթիլը տարբեր կը ջինէ, նոյնպէս տարբեր ջինած է մարդ արարածները իրարմէ, ոչ թէ որպէսզի կոուին իրարու դէմ, այլ՝ որպէսզի մասնակից ըլլան տիեզերքի խմբերգին, բերելով իւրաքանչիւրը իր տաղանդն ու զանազանութիւնը ստեղծելու ներդաշնակութիւն, մեղեդի և միասնականութիւն:

Բայց անոնց մէջ ջունչ չկար:

Ի՞նչ մեծ ճշմարտութիւն և իրականութիւն կը պարունակէ վերեւ գրուած խօսքերը.

«Բայց անոնց մէջ ջունչ չկար»:

Մեզմէ քանիսե՞ր ունին քաջութիւնը խոստովանելու թէ իրենց աշխատանքը կամ յոգնութիւնը «ջունչ չունի», այսինքն իսկական կեանք չի՛ ցոլացներ: Թէ իրենք սխալած են ու ձախողած իրենց ազգային, մշակութային կամ Եկեղեցական գործունէութեան մէջ: Ձեն կրցած իրագործել ջարժում կամ կեանք:

Եզեկիէլ Մարգարէն եթէ միացներ այդ ոսկորները, պատեր զանոնք ջիղերով և միտով ու հագուեցներ մորթով, տալով իւրաքանչիւրին իր անձնական բնոյթն ու նկարագիրը և հոն զանոնք լքէր ու երթար, ի՞նչ կը կարծէք պիտի ըլլար իր աշխատանքին հետեւանքը՝ մեծ ոչնչութիւն:

Այն ատեն ինձի ըսաւ.

«Այն ատեն» խօսքը որքան յուսադրիչ է: Մարդ երբ խոստովանի իր

անկարողութիւնը, Աստուած գին՝ հոն չի լքէր, այլ՝ կը հասնի անոր, սակայն միայն «այն ատեն» երբ մարդ իր թերութիւնը և անկարողութիւնը ճանչնայ:

Շունչին մարգարէութիւն ըրէ,

մարգարէութիւն ըրէ, որդի մարգոյ,

Աստուած երկու անգամ կը հրամայէ (կը կրկնէ) Եզեկիէլի որ մարգարէութիւն ընէ շունչին: Որովհետեւ, մարգարէն որքան որ ընդունած է իր թերութիւնը, տակաւին կը տատամսի շունչին մարգարէութիւն ընելու, որովհետեւ իր ակնկալութեան մէջ յուսախաբ եղած էր: Մարգարէն՝ այնպէս կը հաւատար որ *առանց ջուղի* այդ ոսկորները պէտք է կենդանանային, Բանի որ մորթով ծածկուեցան: Սակայն Աստուծոյ կերպը մարդկային ըմբոնումէն գերիվեր է: Մարգարէ մը պարտ է **ևոր** ներշնչումներով և **ևոր** խոյանքներով տեսնել կեանքի աննիւթապաշտ ըմբոնումները և ձգտի հաւատփի: Ան տեսնելու է մարդը մարմնապաշտ գոյութենէ մը վեր գաղափարակա՛ն խոյանքի մէջ:

Ու շունչին ըսէ

Չ՛ըսէր «հրամայէ», այլ միայն «ըսէ»: Որովհետեւ շունչը հոգի է, ու գերիշխան է մարդ-արարածէն: Առանց շունչի, ո՛վ մարդ, դուն կմախք մըն ես միայն: Երանի թէ համայն մարդկութիւնը ճանչնար ասիկա: Մարդ թէեւ անջրպետի գեղեցկագոյն ստեղծագործութիւնն է, իր մասնայատուկ դիրքը գտնելէն վերջ, պէտք է ճանչնայ իր սահմանումը որմէ յետոյ իր ուժը կրնայ գիտնալ: Մենք իրաւունք չ՛ունինք մեզմէ մեծին և զօրաւորին հրամայել կամ պարտադրել:

Երբ հետազօտենք Աստուածորդի Յիսուսը, Իր մասին սապէս կը կարդանք,

«Այն ատեն, Յիսուս ոտքի ելլելով, սաստեց հովերուն և ծովուն. և մեծ խաղաղութիւն եղաւ: Եւ մարդիկ զարմացան ու կ'ըսէին, «ինչպիսի՞ մէկն է ասիկա, որ հովեր և ծով կը հնազանդին ասոր»--Մատթ. Ը. 26-27:

Յիսուս արարչագործութեան ճարտարապետն է, Ա՛ն իրաւունք ունի սաստելու կամ հրամայելու տիեզերքի զօրութիւններուն, որովհետեւ Ան Տէրն է անոնց բոլորին:

Տէր եհովա այսպէս կ'ըսէ.

Կը տեսնէ՞ք որ նոյնիսկ հրամայողը մարգարէն չէ, այլ՝ Տէրը Ի՛նքն է:

Մարգարէն՝ ինք միայն գործիք մըն է, *բերան* մը, որուն մէջէն Աստուած կը խոնարհի և կը հաճի խօսիլ: Որքա՞ն սուրբ ըլլալու է մեր բերանները որ Աստուած հաճի մեր բերնովը խօսիլ: Մեզմէ շատեր ծխախոտը դադրեցուցած են որ կարենան իրենց սիրելիները համբուրել առանց զանոնք խորտեցնելու: Որքան աւելի զգուշանալու ենք անսուրբ բառերէ, և վարժեցնելու ենք մեր բերանները սրբութեան և մաքրութեան, որպէսզի Աստուած մեր լեզուն ու բերանը գործածէ իր փառքին համար:

Ով ջունջ, չորս հովերէն եկուր,

«Չորս»ը համաշխարհային և նուիրական սուրբ թիւ է: Հաւանական է ան կը ներկայացնէ աշխարհի չորս կողմերը: Հին եգիպտացիներուն և Միջագետքի ժողովուրդներուն համար, «չորս» թիւը նուիրական դեր ունեցած է:

Հին Կտակարանի մէջ՝ «չորս» թիւը կարեւոր տեղ գրաւած է,

ա.--Եղեմի պարտէզին մէջ չորս գետեր կային--Ծննդ. Բ. 10

բ.--Երկիր չորս անկիւններ ունի--Եսայ. ԺԱ. 12:

գ.--Նոյնպէս հովերը չորս հատ են--Երեմ. ԺԹ. 36:

դ.--Խորանին նուիրական կարասիները և անօթները ու չափերը չորս էին--ա.--տապանակ ուխտի, բ.--խնկարկութեան սեղան, գ.--առաջաւորութեան հացի սեղան, դ.--ոսկի աջտանակ

ե.--Պատիժներուն տեսակները չորս էին--Երեմ. Ժե.3, Եզեկ. ԺԴ. 21:

զ.--Աստուածային գահը պաշտպանողները չորս են--Եզեկ. Ա.1,

Յայտ. Դ. 6-7, Ե. 6, 8, Զ. 1:

է.--Չորս կառներ կը հսկեն աշխարհի--Զաք. Զ. 1-8:

ը.--Չորս Ձիաւորներ աղէտ և թշուառութիւն կը բերեն աշխարհի

--Յայտ Զ. 1-8:

«Չորս հովեր»ը միաձուլում, **միասնականութիւն** և զօրութիւն կը նշանակեն: Յարութիւնն ու վերածնունդը տեղի պիտի ունենայ տիեզերքի համայն զօրութիւններու գործակցութեամբ: Կատարելութեան և ամբողջականութեան ձգտում մը, խոյանք մը կը նկատուին չորս հովերը:

Ու այս սպաննուածներուն վրայ փչէ

Փչել երկու իմաստ ունի: Երբ կ'ուզես ածուխով կրակ ջինել կերակուր եփելու, կը փչես անոր վրայ որ չմարի, այլ՝ աւելի բոցավառի: Մական երբ լուցկի մը վառես, մարելու համար զա՛յն ալ կը փչես: Հով տալով՝ թէ՛ կը

վառես և թէ կը մարես, թէ՛ կը կենդանացնես և թէ կը մեռցնես:

Մարդկային ջունչը երբ եղեգի մը մէջէն փչուի, գայն սրինգի կը վերածէ: Ինչո՞ւ Աստուծոյ ջունչը կամ հոգին նոյնպէս չկարենայ կենդանացնել, յարուցանել և վերածնունդ պարգեւել հիւանդներու և ննջեցեալներու երբ անոնց մէջէն անցնի:

Եւ ես մարգարէութիւն ըրի՝ ինչպէս ինձի հրամայեց,

Մարգարէին արտայայտութիւնը և տուած բացատրութիւնը այն տպաւորութիւնը կը թողու, թէ մարգարէն ու Աստուած միաձուլուած անձեր են, իրարու գործակից դարձած էութիւններ: Մէկ տարբերութեամբ որ Աստուած կը հրամայէ, իսկ մարդ կը գործադրէ:

Սոյն յարակից յարաբերութեամբ, երբ մարդ Աստուծոյ պատուէրները իրագործէ, բնաւ ինքզինք նուաստացած զգալու չէ: Մեզմէ քանինե՞ր պիտի չփափաքէին հրամանները կատարել Ամերիկայի Նախագահին, կամ իրենք զիրենք պաշտօնէութեան պիտի չի կոչէին մեծահարուստ միլիոնատերի մը ապարանքը: Միթէ մեծահարուստի մը, նախագահի մը կամ թագաւորի մը ծառայութեան կոչուիլը նուաստացո՞ւմ է, թէ պատիւ ու մեծարանք:

Վերեւ յիշուած իրականութեան մէջ, մարգարէն ոչ թէ մահկանացու թագաւորի մը հետ կը գործակցի և անոր հրամաններն ու կամքը կը կատարէ, այլ՝ տիեզերքի Արարիչ, անճառ Քաղցրութիւն և անսպառ Մէր Աստուծոյ կ'ենթարկէ իր կամքը և իր էութիւնը, որովհետեւ հո՞ն գտած է ան կեանքի իմաստը, նպատակը և աղբիւրը:

Ու ջունչը անոնց մէջ մտաւ,

Հովը և ջունչը բազմաթիւ անգամներ անցած էին ա՛յդ դաշտին վրայէն, ու փչած և նոյնիսկ շարժած այդ ոսկորները: Մակայն բնաւ ազդեցութիւն մը չէին ունեցած անոնց վրայ: Հովին և փոթորիկին ազդեցութիւնը, նախապէս եղած էր ոսկորները ցրուելու և անոնց վրայի ջիղերը փոշիացնելու և մոխրացնելու համար միայն:

Մակայն երբ «ձունչ»ը Արարչին բարի կամեցողութեամբ կ'ելլէ մարգարէին բերնէն, այլեւս պարզ *արտաջնչում* մը ըլլալէ կը դադրի, ու խառնուելով մարգարէին *հաւատքին, գիտակցութեան* և Աստուծոյ *կամքին*, կը դառնայ **ստեղծագործ զօրութիւն**:

***«Ան կը թափանցէ մարմինէն ներս մինչեւ ծուծը
“ոգիին և հոգիին” յօդերուն և ծուծին բաժանումի
սահմանը. ան կը բննէ մաածումները և սրտին խոր-
հուրդները»*** -- Երբ. Գ. 12:

Այս ներգործութեամբ ջունչը ներս կը մտնէ անկենդան մարմիններէն ու կը վերակենդանացնէ մեռեալներն ու ննջեցեալները:

Կ'ուզե՞ս մտածումներով և խորհրդածութիւններուն վերակենդանանալ թմբիրել: Թող սուր որ Հոգին Սուրբ մտնէ քու ներաջխարհոյ ու քեզ ոտքի կանգնեցնէ:

Ու կենդանացան և իրենց ոտքերուն վրայ կայնեցան ու խիստ մեծ զօրք մը եղաւ:

Միայն կենդանանալ չի բաւեր, պէտք է նաեւ *կանգնիլ*: Բազմաթիւ են *կենդանի* մարդիկ, որոնք բոլորն ալ կը տառապին հիւանդանոցներու, ծերանոցներու և անկելանոցներու մէջ: Մեզմէ քանիսն է՞ր պիտի ուզէին այդպիսի կեանք մը ապրիլ:

Երբ կեանք տուողը Աստուած է, երբ վերածնունդ պարգեւողը մեզ սիրող Տէրն է, Ան նպատակի՛ մը համար մեզ կը վերանորոգէ և կը վերածնի: Մեզ զօրքի՛ կը վերածէ և ոչ խուժանի: Զօրքի մը և խուժանի մը տարբերութիւնը շատ մեծ է:

«Զօրք» բառը իրանեան ծագում ունի և տարածուած է Հնդկաստան, Կովկաս և մինչեւ Պալէստինները: «Զօրք» բառը կու գայ «զօր» բառէն որ կը նշանակէ «ուժ, զօրութիւն, խելք և իմաստութիւն»: Իսկ «զօրք» կը նշանակէ *կազմակերպութեամբ, մարզութեամբ* ու *կարգապահութիւն*, ունեցող զինեալ ամբողջութիւն: Մարզանք և կարգապահութիւն ինք իր մէջ ունի դաստիարակութեան և կրթութեան իմաստը: Հետեւաբար, վերածնունդ ունեցողները զօրք մըն են և ոչ խուժան, դաստիարակուած ու աշակերտած Յիսուսի և Անոր սիրոյ Աւետարան հեռանկարին:

**«Գացէ՛ք ուրեմն, աշակերտ դարձուցէք բոլոր ազգերը
...սորվեցուցէ՛ք անոնց պահել այն ամէնը, ինչ որ պատուիրեցի
ձեզի»:** Կըսէ Յիսուս բոլոր վերածնեալ և արթնցած հաւատացեալներուն՝
1915-ի Մեծ Եղեռնէն պրծած հայերուն:

**Ապրիլ 16, 1987
Թորոնթօ**